– Ի՜նչ հուզիչ է, հայրի՛կ,– ասաց Բելը: Հայրիկի՝ Մորիսի հետ քաղաքի կենտրոն էին շտապում: Գյուտարարների տարեկան առաջին հավաքի առաջին օրն էր: Մորիսն արդեն քանի ամիս դրա կազմակերպմամբ էր զբաղված, և ահա վերջապես նշանակալի օրը վրա էր հասել:

– Իհարկե, բոլոր ծայրերից մարդիկ են գալու: Սիրտս վկայում է, որ մեզ զարմանալի անակնկալներ են սպասում:



Երբ տեղ հասան, հրապարակն ասես մրջնանոց լիներ. այսպիսի եռուզեռ կյանքում չէին տեսել: Մարդիկ եռանդով տաղավարներ էին կանգնեցնում իրենց անհավանական գյուտերը ցուցադրելու համար:

– Կուզե՞ս, քանի պատրաստվելու եմ՝ գնա, մի քիչ շրջիր,– առաջարկեց Մորիսը: Բելն այս խոսքերին էր սպասում: Նոր հայտնագործությունների համար խելքը գնում էր, իսկ այստեղ քանի՜-քանիսը կային...

Որ կողմ նայում էր, մի զարմանահրաշ սարք էր տեսնում: Մի մասը՝ տարօրինակ զանգակներով ու սուլիչներով, մյուսները՝ գործնական, մի մասն էլ պարզ, բայց շատ պետքական:

Գիրքն ամբողջությամբ

ԱՅՍՏԵՂ